Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Ս. Տեր-Սիմոնյանը։

Հանձնաժողովը քննարկել է 7 բարեգործական ծրագիր։

Մասնավորապես, քննարկվել եւ հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող Կոտայքի մարզի Չարենցավանի բժշկական կենտրոնի մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքի հիմնանորոգման նախագծում ծրագիրը։

«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Վանաձորի «Տարոն - 3» թաղամասում 15 բնակարանի կառուցում» ծրագիրը։

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Հաղպատ և Արևածագ համայնքների մանկապարտեզների խաղահրապարակներում խաղասարքերի տեղադրում» ծրագիրը։

«Բարձունք 5165» ֆրանսահայ բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Էջմիածին 13»; «Գյումրի 13» եւ «Վարդենիս 13» ատամնաբուժական դիսպանսեր ծառայության մատուցում, ինչպես նաեւ «Գյումրի 13» ռադիոլոգիայի դիագնոստիկ ծառայության մատուցում։

Նիստում քննարկվել եւ հաստատվել են նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ եւ տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր։

Քննարկվել եւ հաստատվել է նաեւ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 11-ի «Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Հայաստանյան միջեկեղեցական բարեգործական կլոր սեղան» հիմնադրամի կողմից իրականացվող 2010 թվականին իրականացվող «Նվերներ Հայաստանի երեխաներին» ծրագրի մասին» N Մ- 862-Ա որոշմամբ հաստատված ծրագրի որակումը փոփոխելու (չեղյալ ճանաչելու, կասեցնելու) մասին որոշումը։